# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

25 սեպտեմբերի 2014թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Կ. Նալբանդյան
Հ. Իգիթյան
Բ.Ղալոյան
Հրավիրված Է. Միքաելյան

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Շիրակ» ֆուտբոլային ակումբի մարզումային փոխհատուցումը ուշացնելու մասին /զեկուցող Ա.Լոպոյան/

2. 22/09/14թ. «Շիրակ-2»-«Ուլիս-2» (ԱԽ14-15025) խաղին «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Անդրեյ Գամալյանի (N 25379) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

3. 17/09/14թ. «ԱՖԴ-99»-«Ալաշկերտ-99» (16B004) խաղին «ԱՖԴ-99» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Իսկանդարյանի (N 23269) հեռացման (խաղից հետո հայհոյեց մրցակցին որից հետո վիճաբանություն սկսվեց ) մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

4. 17/09/14թ. «ԱՖԴ-99»-«Ալաշկերտ-99» (16B004) խաղին «Ալաշկերտ-99» թիմի ֆուտբոլիստ Արմեն Մկրտումյանի (N 23723) հեռացման (խաղից հետո պատասխանեց մրցակցի հայհոյանքին հայհոյանքով) մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

5. «Ֆուրման Աբրահամյան» ֆուտբոլային ակումբի նախագահ Ա. Աբրահամյանի 18/09/2014թ. նամակի քննարկումը /զեկուցող Բ. Ղալոյան/

6. Սիսիանի ֆուտբոլի դպրոցի կողմից մրցումների անցկացման կանոնակարգը խախտելու մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

**1. «Շիրակ» ֆուտբոլային ակումբի մարզումային փոխհատուցումը ուշացնելու մասին**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակ» ֆուտբոլային ակումբի մարզումային փոխհատուցումը ուշացնելու համար, ՀՖՖ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխությունների կանոնակարգի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ակումբին հայտարարել նկատողություն և կրկման դեպքում կիռարել կանոնակարգով սահմանված խիստ պատժամիջոցներ:

**2. 22/09/14թ. «Շիրակ-2»-«Ուլիս-2» (ԱԽ14-15025) խաղին «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Անդրեյ Գամալյանի (N 25379) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) մասին**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

22/09/14թ. «Շիրակ-2»-«Ուլիս-2» (ԱԽ14-15025) խաղին «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Անդրեյ Գամալյանի (N 25379) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

**3. 17/09/14թ. «ԱՖԴ-99»-«Ալաշկերտ-99» (16B004) խաղին «ԱՖԴ-99» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Իսկանդարյանի (N 23269) հեռացման (խաղից հետո հայհոյեց մրցակցին որից հետո վիճաբանություն սկսվեց) մասին**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

17/09/14թ. «ԱՖԴ-99»-«Ալաշկերտ-99» (16B004) խաղին «ԱՖԴ-99» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Իսկանդարյանի (N 23269) հեռացման, (խաղից հետո հայհոյեց մրցակցին որից հետո վիճաբանություն սկսվեց) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 4 խաղով, Արթիկի մանկապատանեկան ֆուտբոլի մարզադպրոցին տուգանել 15000 դրամ:

**4. 17/09/14թ. «ԱՖԴ-99»-«Ալաշկերտ-99» (16B004) խաղին «Ալաշկերտ-99» թիմի ֆուտբոլիստ Արմեն Մկրտումյանի (N 23723) հեռացման (խաղից հետո պատասխանեց մրցակցի հայհոյանքին հայհոյանքով) մասին**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

17/09/14թ. «ԱՖԴ-99»-«Ալաշկերտ-99» (16B004) խաղին «Ալաշկերտ-99» թիմի ֆուտբոլիստ Արմեն Մկրտումյանի (N 23723) հեռացման, խաղից հետո մրցակցի հայհոյանքին հայհոյանքով պատասխանելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 5000 դրամ:

**5. «Ֆուրման Աբրահամյան» ֆուտբոլային ակումբի նախագահ Ա. Աբրահամյանի 18/09/2014թ. նամակի քննարկումը**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Ֆուրման-97» թիմի առաջնությանը մասնակցելուց հրաժարվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Ֆուրման-97» թիմի հանել առաջնությունից, «Ֆուրման Աբրահամյան» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

**6. Սիսիանի ֆուտբոլի դպրոցի կողմից մրցումների անցկացման կանոնակարգը խախտելու մասին**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Սիսիանի-2000» թիմի մրցումների անցկացման կանոնակարգի 9-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետը խախտելու համար՝ մարզիչ Դ.Արզումանյանին հայտարարել նկատողություն, Սիսիանի ֆուտբոլի դպրոցին տուգանել 3000 դրամ

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ